



տան իւր հազար թնդանթներէն հազիւ քառասունը կրնայ գործածել, հեծելագունը սակայն լաւագոյն կազմակերպութիւն մը ունի՝ Պարսկաստանի հեծելագունը ըստ պաշտօնական յայտարարութեան 150-200000 մարդիկներէ կը բաղկանայ. սակայն հազիւ 95000 պատրաստ կայ, իսկ պատերազմի ժամանակ կարելի չէ 40 էն 50000 ոտքի հանել։ Այնպէս որ պատերազմին սկսած օրն Պարսկաստանի զօրութեան երեք չորրորդը պիտի անհետանան և երբէք չիպիտի տեսնուին։

Մակեդոնիա

Մակեդոնիոյ մէջ Սերպերու և Պուլկարներու հակառակութիւն թիւնները վերջին օրերս երկուսով կը մեծնան։ Պուլկարները կը գանգատին թէ թուրք քաղաքականութիւնը Սերպերուն նպատակաւ է ի վնաս իրենց։ Իւսքիւպի նոր մեթորոպոլիտի (սեպտ.) ընտրութիւնը և նոյն տեղւոյն մէջ սերպական դպրոցներու բացումը կը զայրացնեն Պուլկարներն։ Վէլէսի մէջ, պուլկար բնակիչներն խառնակութիւններ հանած են սերպական դպրոցներու փակումը խնդրելով։ Ասոնք կը խնդրէին նոյնպէս որ քաղաքէն ճամբեն սերպ անձնաւորութիւն մը թուրք կառավարութիւնը նախ սկսած է իւր զօրքերն շատցնել ախտեղ, կասկածելի սերպն Սալոնիկ զրկած է և բոլորովին մերժած սերպական դպրոցներն գոցելու։ Սակայն գիտնալու է թէ Մակեդոնիոյ մէջ ազգայնութեանց կռիւները, արտաքին քրքումներով սուր բնաւորութիւն մը կառնուն։ Միայն լեզուն ազգայնական գոյն մը կուտայ անոնց, սակայն Մակեդոնիոյ մէջ շատ անձինք երեք չորս լեզու կը խօսին՝ յունարէն, Մակեդոն. Ռումաներէն և սլաւական բարբառ մը։ Ըստ իրենց վարկիւնական չափուն, և կամ ըստ որում

թէ մի վարժապետ և կամ մի քահանայ իրենց համակրելի կամ հակակրելի է, նոքա յունական, սերպական և կամ պուլկարական եկեղեցւոյն կը յարին։ Եղած է որ մէկ օրուն մէջ հինգ հարիւր անձինք իրենց ազգութիւնն փոխած են։ Սերպերու և Պուլկարներու միջեւ միայն անհատներու կամայականութիւնն է որ կ'որոշէ թէ որ խմբին պիտի պատկանին։ Մակեդոնիոյ սլաւ բարբառներն շատ քիչ ծանօթ են, այնպէս որ ամենայանի լեզուաբաններն բաւական դժուարութիւն պիտի բռնեն որոշելու թէ ո՞րն Պուլկարիւրէն և ո՞րն Սերպերէն բնորոշ է։ Այս խառնակութեան մէջ Անգլիոյ հիւպատոսն ի Սալոնիք հռչակաւոր Պիլիթիոյ որ այնքան էնթրիքներ լարեց կրէտէի մէջ, բոլորովին գործու վրայ է, Ամենայն ինչ անկէ կայսրու ունի, բաւական է որ նա մտքը վերցնէ և խառնակութիւնը կը ծագին. իսկ իմէ որոշած է որ խաղաղութիւնը տիրէ, հաւատացէ որ այդ կռիւներն և խառնակութիւններն Սերպերու, Պուլկարներու, Յուններու և թուրքերու միջեւ, միայն տեղական բնաւորութիւն մը պիտի ունենան։

Փարիզը կը գեղեցկացնեն

Հազիւ քանի մը ամիս մնաց 1900ի Յուլիանիէսին բացուելուն։ այդ առթիւ բնական է թէ շատ մը օտարականներ փարիզ պիտի թափին։ ասոր համար թէ քաղաքականութիւնը, թէ մասնաւոր տուններու տէրերն կը ջանան պէտք եղածն մաքրել, շրտկել, զարգարել և գեղեցկացնել նազելի փարիզը։ Փարիզի ամեալխաւոր կէտերէն մին անտարու կոյս Գոմբարտի հրապարակն է որ միեւնոյն ժամանակ Յուլիանի գիտին նախասենեակն է. ուստի անոր վրայ շատ կարեւոր փոփոխութիւն կը լինի, այն որ արդէն մէկ հատիկ է բոլոր աշխարհի մէջ, աւելի անզուգական ընելու համար։

Ա. Սկսի և Մ. Դալիք-Բեկ

ՍՏՈՐ ԲԱՐԲԵՐ

— 30 —

Մեր մէջ կարգ մը անորակելի դէմքեր, բարոյազուրկ արարածներ, իրենց գաղափարին հակառակողներու դէմ ճակատաբաց մաքուր կռիւ մղելու անկարող կ'գիմին այդպիսի ստոր միջոցներու, որոնք պէճանք ու զգուհի կազմեն իրենց ներսիքին խղճի ու զգացման ամենագոյնը նշոյլ մ'ունեցողներուն իսկ։ Այդ գաճաճներ «նրպատակը միջոցը կարգաւորացնէ» ճիշդ թիւական վարդապետութեան հաւատարիմ յանուն բարձր գաղափարներու, վսեմ իտեալներու ամեն տեսակ ստորնութիւն ու վատութիւն ընել կը յանդիման։ Ասոնք իրենց օգուտն եղող հայհոյիչ, զրպարտիչ ու կեղծարար եւ կամ մէկ խօսքով փողոցային թերթի մէջ ծայրայեղ լրբութեամբ կը հայհոյեն, ստոր նենգութեամբ կը կեղծեն ու աններելի վատութեամբ կը զրպարտեն ամեն տոնք որք իրենցմէ տարբեր կը խորհին, կը մտածեն ու կը գործեն։ Արքիար մատնիչ է ըսին, փաստ չցցուցին։ Չաքրիանը, Ճգնաւորները դաւաճաններ անուանեցին, իրենք խառնակութեամբ զրպարտիչի իշխան հողան։ Չապանեան Բարիզի թուրք դիպլոմատան շուրջը կը սլքտայ զրկելն առանց ապացոյցի։ Սարաճեան սրբալիւն Նիւ-Խորքի տաճիկ գործակալին հետ տեսակցութիւն կուենայ հաղորդեցին նենգութեամբ։ Ահա՛ այսպիսի ամենաանտարկութիւններով լեւի լիցուն է Պուլկարահայութեան ամօթը եղող փողոցային թերթի սինակները։ Ու ասոնք չեն շիկնիր ինքզինքնին յառաջգիւղական ալ անուանելէ։ Է՛, չիտակը ալէկ յառաջգիւղականութիւն. ստեղծ, հայհոյիլը ու զրպարտելը յառաջգիւղական անուանել, պէտք է խոստովանել թէ ամեն մարդու գործ չէ։

Սակայն ասոնք այսչափով ալ

գոհ չեն ըլլար. իրենց հակառակողները մինչեւ գերեզման հալածել յետոյ, դեռ անկէ անդին ալ կը շարունակեն։ Այս անգամ զԲ. պարտիչ թերթի բարոյապէս մեռած խմբագրութեան նման մէկն ալ Սօֆիան քարեր կը նետէ ջանքերանի գերեզմանին վրայ։ «Ռումանիոյ մէջ վարած ցոփ ու զիշկ կեանքի վարագործը չպիտի բանամ, բարբառնելով։

Պարոն, ձեզ տրդէն հասկցած ենք թէ դուք ևս կը պատկանիք անոնց կարգին որք ամէնու չեն գիտեր։ Մէկու մը կենդանութեան ատեն ըսի չհամարձակած նիդ՝ անոր մահուընէ վերջ պոռալ կանչելիք ցածութիւն ու վատութիւն է։ Սօֆիաներու պետք վարդօ, Չաքրիանի կենդանութեան ատեն, մուծ անկիւններու մէջ, սրճարաններու քեռները շատ բաժանանքներ բրաւ, բայց որ մը չհամարձակեցաւ զանոնք իր թերթով հրապարակել։ 1862ին ալ Չիլ նման կարգ մը անորակելիներ, միշտ մուծի մէջ, ստայող ամբաստանութիւններ ըրին Չաքրիանի մասին. մարդը հիւսնող վիճակի մէջ անկողինէն Ամէնիսի միջոցաւ յայտարարեց որ զրպարտիչներ իրեան գան և արձակ համարձակ։ Ո՛չ որ տեսնուեցաւ հրապարակի վրայ, և արդէն ատկէ զատ ի՞նչ կարելի է սպասել վատ զրպարտիչներէ։

Չաքրիան կարգ մը դարձիլ բուռած կրծիչներու նման հայ ժողովուրդի հաշւոյն չէ ապրած երբէ՛ք, եւ ո՛չ ալ դժբաղդ ու թըլուտ ժողովուրդեան արիւնն ու արցունքը շահագործելու անխղճութիւնը ունեցած է, ալ իւր բոլոր ֆիզիքական, նիւթական ու բարոյական ոյժը նուիրած է իւր սիրած ու պաշտած Հայրենիքին։ Գիտեմ դուք չէք ուզեր հասկնալ ասոնք, բայց հոգ չէ. ամեն կասկածէ ու կիրքէ վեր ազգային պատմութեան մէջ նա արդէն զը

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (56)

ԺԱՄԱՆԱԿԱԿՅ շԱՅ ԿԵԱՆԲԷ ՊԱՏԿԵՐ ՄԵ

ՄԱՍՆ Բ.

— 1 —

ԺԷ.

96 Ակն 23 զեկտեմբ.

«Սիրելի Վահրամ,

Մօտ ամիս մը կայ որ ստացեր եմ նամակդ եւ տակաւին չեմ պատասխանած, գիտեմ որ շատ պահանջող ես, այլ ներողամիտ պիտի ըլլաս երբ քեզի ըսեմ որ ընտանեկան մեծագոյն զրոյքազուրկութիւն մը, անհնարին հարուած մը դիմ յամեցուց։

Հայրս, Յովհաննէս աղան թուականէս երկու ամիս առաջ մեռաւ կիրաստի մէջ, անոր, անպաշտպան վիճակի մը ենթակայ. երեւակայէ հոգիս վրայ ծանրացող անպատմելի վիշտը, մօրս սրտապատառ ողբերը, խեղճ կնիկ, որուն ճակատագիրը զժրագրութիւնը եղած է քանի մը տարիներէ հետէ. ես եղայ իրենց կեանքին մէջ թոյն խառնողը եւ քաջարար կըզգամ որ այս անակընկալ մահուան առիթով իրեն ըս-

փոփոխեալ կրնամ ըլլալ. եւ հաւատաւ Վահրամ իմ դերս ամենայն հաւատարմութեամբ կրնամ կատարել։

Երբեմն կան յուշեր որ կեանքէս կը զգալիմ, երբ կը նկատեմ որ իմ գոյութիւնս դաւաճանի մը եւ ծնողքիս մէջ կոռւածաղկի մը նշանակութիւնը ունեցաւ. բայց մտքի բույնական այդ թուրթիւնն իսկոյն կը յայտնուի Հայրենիքի զժրագրութիւնը, Հայրենիքի ամեն անկիւնը ամեն օր կը ինտելեկտալայնորէ գեղեցիկ, ազգին նկատմամբ ունեցած պարտականութիւններու սկառաւորումը եւ աւելի կուս կերպով կը փարիմ կեանքին. կը յիշեմ զքեզ եւ այս պարագայիս ապրիլը ինձի համար անխուսափելի հարկ մը կը դառնայ։

Ա՛յն Վահրամ, երբ արդեօք ազատ Հայրենիքիս պիտի վայելինք, այդ օրը միայն մեր այսօրի վիշտերը մասամբ պիտի մեղմանան, այդ օրը միայն կենսատու ներկայի մը մօտ մեր ցաւատառն անցեալի մնայլ պատկերը պիտի գունամոխալուի իր ոյժը կորսնցնելով։

Ընդհանուր կացութեան վրայ առա-

ջիւղայով պիտի գրեմ։»

Հրանդշ

Ակն 24 յուլիս 97

«Սրտահատոր Վահրամ Ստացեր եմ յուլիս 3 թուակիրը, հօր մահը կըզգես եւ ամեն անգամ որ անոր անունը զրիչիդ տակ կ'իյնայ, կը տեսնեմ որ հոգիդ կը բռնկի. հապա ես... կը յիշեմ որ, սն երջանիկ օրերուն մէջ, երբ կեանքի լիզին անբույրացէ մութն էր ինձ քու անմոռանալի դասախօսութիւններով միջոցին տոկունութիւն եւ համբերութիւն կը քարոզէիր ինձի, եւ ես հմայուած կուենկիւրէի քեզ երկիւղած ուշադրութեամբ տառնց երբէք մտքէս անցնելու որ համբերութեան, տոկունութեան հարկը զգալի ըլլալիք օրեր պիտի գան։

Դրախտի մը մէջ կապէի եւ 90 թուականին եւ հիմա այդ դրախտը զբոսի մը փոխուած է։ Չես գիտեր Վահրամ ի՞նչ կը ներկայանայ քեզ զրեցի ընդհանուր կացութեան վրայ ներկայ

տարիս մէջ. միեւնոյն յանկեղծ պատարալ կը կրկնուի ստիպուած եմ. իրեւոր այնքան փոխուած, կատաղաբութեան եւ ոգիին յարաբերութիւնները այնքան լարուած, իսլամ եւ քրիստոնեայ տարբին միջեւ աստիճաններ հասեալութիւններ անկարելի է որ չը յաջորդեն այս ձգտելով վիճակին։

Հակառակ տեղացի ջոշերու կատաղութիւնը սիրաշահել ջանալուն խոյ եւ եղբական զրոյցը բերնէ բերան մնալու պայ. անցած տարիէն սկսող Հայաստանի ջարդ ու աւերակները մնացել է Ակնը, բացառութիւն մը որ շատ աններելի է զօջաբող թուրք պաշտօնատար եւ անոր արժանաւոր դործակատար դասակարգին համար. երբեք լիքսանը ինձի եկաւ։ Քարբերդէն առած տեղեկութեանցը համեմատ հիշեալ քաղաքի փաշան, տարիւնտ վեհապետին այդ հարազատ դահիճը տեղին կուսկային հետ գլուխ գլխի տուած վերլուկանապէս որոշուած կայացուցած է Ակն ալ զարնել տալու։

Ալիքսանի ըսածները կը կրկնուին



